Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի տեղակալների կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

2013 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 150 առաջարկություն, դիմում և բողոք, որից 20–ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզա-բանում	Մերժվել է	Ծանոթություն
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուի ներմուծման ենթակա լինելու մասին եզրակացություն տրամադրելու մասին	23	23	23			
Հայաստանի Հանրապետություն ներկրվող երինջների խմբա-քանակից երինջներ հատկացնելու մասին	10	10		10		10 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները կքննարկվեն ՀՀ ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կողմից և արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի: Միաժամանակ պարզաբանվել է, որ գործող կարգի համաձայն անհրաժեշտ է ՀՀ գյուղատնտեսության նախա-րարություն ներկայացնել համապատասխան տեղե-կատվություն իրենց կողմից տնօրինվող անասնաշենքերի և կերային մշակաբույսերի ցան-

						քատարածությունների վերաբերյալ: 2 դիմումատու հրավիրվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և նրանց տրվել են համապատասխան պարզաբանումներ: Բացի այդ, նրանց պատասխանվել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի համապատասխան գրությամբ:
Գյուղատնտեսական տեխնիկա, անվադողեր հատկացնելու մասին	12	12		12		11 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից աշխատանքներ են տարվում գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության և տեխնիկական միջոցների համալրման նոր մոտեցումների և մեխանիզմների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ ռուսական <Ռուսագրոլիզինգ> ԲԲԸ-ի և բելառուսական <Պրոմագրոլիզինգ> ընկերությունների հետ գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Ներկրվելիք գյուղատնտեսական տեխնիկան կտրամադրվի լիզինգային եղանակով, երկարաժամկետ վճարման պայմանով: Վերը նշված եղանակով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու պատրաստակամության դեպքում՝ անհրաժեշտ է

						գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի ցանկը տրամադրել համապատասխան մարզպետարանին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացնելու համար: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից և ֆինանսական այլ միջոցների չի տնօրինում: Անվադողերի ձեռքբերման համար անհրաժեշտ է դիմել բարեգործական ընկերություններին և հիմնադրամներին:
Կաղամբի, կարտոֆիլի իրացման գործում աջակցելու, 2012 թվականին պահածոների գործարանին հանձնված պտղի և բանջարեղենի դիմաց վճարումները կատարելու համար միջնորդելու մասին	5	4	1	3		1 դիմում ընթացքի մեջ է: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ կարտոֆիլի բերքի իրացմանն աջակցելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բանակցություններ է վարել <Սպայկա> ՍՊԸ-ի հետ և վերջինս հավաստիացրել է, որ առաջիկա օրերին կվերսկսի կարտոֆիլի գնումները: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուներին, որ նրանց կոնտակտային տվյալները տրամադրվել են <Սպայկա> ՍՊԸ-ին:
Աշնանացան ցորենի սերմացուի ցածր ծլունակության պատճառով պայմանագրային պարտավորությունները վերանայելու մասին	5	5		5		5 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N 94-Ա հրամանով ստեղծվել է

						անկողմնակալ հանձնաժողով: Վերջինիս կողմից ուսումնասիրություններ են կատարվել հացահատիկային մշակաբույսերի աշնանացանի և գարնանացանի ցանքատարածություններում և պարզվել է, որ աշնանացան ցորենի որոշ ցանքատարածություններում 2011 թվականի աշնանն եղանակային չորային պայմանների հետևանքով սերմացուները վատ են ծլարձակել, բույսերի թփակալման հանգույցները մնացել են հողի մակերևույթին մոտ և լիարժեք պատրաստ չեն եղել ձմեռմանը, հետագայում ջերմաստիճանի անկման հետ մեկտեղ տեղումների սակավության պատճառով ցանքատարածություններն ուշ են ծածկվել ձնով և արդյունքում բույսերը մասամբ ցրտահարվել են, իսկ 2012 թվականի գարնանն եղանակային չորային պայմանները շարունակվել են գրեթե մինչև բերքահավաք, նույնիսկ ոռոգելի տարածքներում օդի հարաբերական ցածր խոնավության պատճառով հողում խոնավություն չի պահպանվել, ինչի արդյունքում բույսերը ժամանակից շուտ են անցել խողովակալման և հասկակալման փուլերը: Որոշ դեպքերում այդ երևույթներն ավելի են ար-

						տահայտվել ցանքերն ուշ կատարելու և ագրոտեխնիկական կանոնները չպահպանելու հետևանքով: Միաժամանակ դիմումատուներին պարզաբանվել է, որ մարզպետարանների և աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած շահառուների միջև կնքված պայմանագրերում ֆորս մաժորի վերաբերյալ դրույթ նախատեսված չէ: Հետևաբար նրանք պարտավոր են կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:
Սիբիրախտ հիվանդության հետևանքով անկած կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության ծառայությունը չի զբաղվում վարակիչ հիվանդություններից անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու խնդրով:
Գյուղատնտեսության առանձին ոլորտների զարգացմանը, սահմանամերձ գյուղերի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման մասին	8	8	8			8 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց կողմից ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվող ծրագրերում:
Վարկ տրամադրելու և վարկի մարման ժամկետն երկարաձգելու մասին	8	8		8		1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դիմել է

						<Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ> ՓԲԸ-ին վարկի մարման ժամկետն երկարաձգելու խնդրանքով: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դիմել է <<Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ>>ՓԲԸ-ին վարկի տրամադրումը մերժելու խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար: Պատասխանը ստանալուց հետո դիմումատուին արդյունքների մասին կտեղեկացվի: 6 դիմումատուի պարզաբանվել է, որ վարկերը տրամադրվում են հետևյալ պայմաններով. -յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է մինչև 3 միլիոն ՀՀ դրամ, մինչև 2 տարի մարման ժամկետով, -վարկը տրամադրվում է առավելագույնը 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, որի 4 տոկոսային կետը սուբսի-դավորվում է պետության կողմից, -մայր գումարի և տոկոսների վճարման համար սահմանված արտոնյալ ժամկետը վարկի տրա-մադրման պահից հաշվարկվելու է առնվազն վեց ամիս (վարկի տոկոսների վճարման պարտա-կանությունը վարկառուի մոտ

						առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած վեց ամիս հետո): Վարկ ստանալու համար անհրաժեշտ է դիմել վերը նշված բանկերին և վարկային կազմակերպություններին՝ ներկայացնելով համապատասխան գործունեության համար գործարար ծրագիր և այլ փաստաթղթեր, որոնք կպահանջվեն վերջիններիս կողմից: Վարկային ռիսկն ամբողջությամբ կրում են բանկերն ու վարկային կազմակերպությունները, հետևաբար նրանք են որոշում և ընտրում վարկ ստացող անձանց, որոնց գործունեությունը համապատասխանում է իրենց վարկավորման կարգին: Միաժամանակ պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իրավասու չէ միջամտել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությանը:
Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի սերմացու, ազոտական պարարտանյութ, պտղատու ծառերի տնկիներ հատկացնելու մասին	7	7	4	3		2 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N165-Ն որոշման հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով պետության կողմից ձեռք բերված արժեքից շուրջ 40 տոկոս ցածր

						գներով գարանանացան գարու՝ 1կգ 200 դրամով, եգիպտացորենի՝ 1կգ 350 դրամով, առվույտի՝ 1 կգ 15000 դրամով և կորնգանի՝ 1 կգ 370 դրամով սերմացուները հատկացվել են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին հողօգտագործողներին հատկացնելու համար: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութը հատկացվել է միայն ՀՀ մարզպետարաններին հողօգտագործողներին հատկացնելու համար:
Ձուկ և ձկնամթերք ՌԴ արտահանման թույլտվություն տրամադրելու համար միջնորդելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն ՌԴ անասնաբուժական և ֆիտոսանիտարական դաշնային ծառայության և ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության միջև կնքված Հուշագրի՝ ձկան և ձկնամթերքի արտահանման հետ կապված ատեստավորման հարցերը համակարգվում են ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության ծառայության և ռուսաստանյան ներկրողների հայտերի հիման վրա:
Գույքի օտարման թույլտվություն	7	7		7		5 դիմումատուի պարզաբանվել է,

տալու, անտառային հողատարածք վարձակալության տրամադրելու մասին						որ ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N 316-Ն որոշման համաձայն պետական անտառներն ու անտառային հողերը վարձակալության են տրամադրվում մրցույթի միջոցով: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կիայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա կողմից նշված տարածքը չի հանդիսանում պետական անտառային հողատարածք: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ դիմումում նշված գույքը գտնվում է սնանկ ճանաչված <Հրազդանի անտառտնտեսություն> ԴՓԲԸ-ի հաշվեկշռում, հետևաբար անհրաժեշտ է դիմել ընկերության անվճարունակության գծով կառավարչին:
Վառելափայտ տրամադրելու մասին	2	2	2			
Աշխատավարձի չափի և սոցվճարումների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու, աշխատանքային գրքույկում լրացում կատարելու մասին	7	7	6		1	
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած	5	5		5		5 դիմումատուի պարզաբանվել է, որ հիվանդության հետևանքով

վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին						անկած և հարկադիր սպանդի ենթարկված խոզերի կենդանի զանգվածի վերաբերյալ տվյալ-ները պահպանվում են ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տվյալների շտեմարանում: ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N84-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախա-րարությանը հատկացված գումարները տրամադրվել են 2007 թվականին խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասների դիմաց տրամադրվող փոխհատուցման ցուցակներում հաշվառված սեփականատերերին և 2007 թվականից ի վեր ՀՀ կառավարության կողմից վերո-գրյալ նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:
Սահմանվածից ավելի գնով ազոտական պարարտանյութի և դիզվառելիք վաճառքի փաստերն ուսումնասիրելու և համապա-տասխան միջոցներ ձեռնարկելու մասին	6	4		2	2	2 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսության տարբեր ոլոտների գործունեության վերա-բերյալ տեղեկատվություն տրա-մադրելու մասին	10	10	10			
Աշխատանքի ընդունելու, աշխա-տանքում վերականգնելու, սխալ հաշվարկված աշխատավարձը	7	6		6		1 դիմում ընթացքի մեջ է: 4 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության

վերահաշվարկելու, աշխատավարձը բարձրացնելու մասին						նախարարության աշխատակազմում թափուր պաշտոններում նշանակվում են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում և առաջարկվել է նրանց հետևել <Հանրային ծառայության> շաբաթաթերթին, որում հրապարակվում են հայտարարություններ քաղաքացիական ծառայության համակարգում առկա թափուր պաշտոնների վերաբերյալ: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նա ունի անասնաբույծի որակավորում, իսկ 2013 թվականի համար նախատեսված գյուղատնտեսական կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների կատարման համար անհրաժեշտ է անասնաբույժ մասնագետ: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ <Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն> ՊՈԱԿ-ում թափուր հաստիք առաջանալու դեպքում, նրան կառաջարկվի համապատասխան աշխատանք:
<Թամարա ֆրութ> ՓԲԸ-ի կողմից իրականացվող օրգանիկ այգիների հիմնման ծրագրում ընդգրկելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կուսումնասիրվի նրանց

						հողատարածքները և դրանցում օրգանական գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Սահմանված պայմանները բավարարելու դեպքում կքննարկվի նրանց ծրագրում ընդգրկելու հարցը: Հողատարածքի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովի այցելության մասին լրացուցիչ կտեղեկացվի:
Տարաբնույթ հարցեր /հողամաս հատկացնելու, ՀՀ վարչապետի մեդալով պարգևատրելու համար միջնորդելու, չգործող կոյուղագծի վերանորոգման գործում աջակցելու, պանրի արտադրությունում լրացուցիչ ուսումնասիրություն անցկացնելու, ապօրինի ծառահատումների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու, ֆինանսական օգնություն ցուցաբերելու, համայնքում անասնապահության զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելու, փոխադարձ պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու և այլն/	20	20	5	15		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն : 1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Կոտայքի մարզպետարան: 1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ տարանսպորտի և կապի նախարարություն:
ԸՆԴԱՄԵՆԸ	**150**	**146**	**59**	**84**	**3**	**4 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2013 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 28 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբանում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
ՀՀ-ում ձկնաբուծության արտադրության և արտահանման ծավալների մեծացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	4	4	4			
ՀՀ-ում մեղվաբուծության զարգացման խոչընդոտների վերացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
Ոչխարարաբուծության զարգացման մասին	1	1		1		
Ժամկետանց թունանյութերի վերացման համար մասնագիտական խորհրդա-տվություն տալու մասին	1	1		1		
Աշխատանքով ապահովելու մասին	2	2		2		
Կարտոֆիլի տնկանյութ տրամադրելու մասին	1	1		1		
<<Հայաստանի Հանրապետությունում 2010–2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման> ծրագրում ընդգրկելու մասին	1	1		1		
Դիզելային վառելիք և պարարտանյութ տրամադրելու մասին	10	10		10		
Համայնքային անասնաբույժ աշխատած ժամանակահատվածի համար տեղեկանք տրամադրելու մասին	3	3		3		

Գյուղատնտեսական մթերքների արտահանման կարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Գյուղատնտեսական բացօթյա շուկայի տարածքում վաճառասեղան հատկացնելու մասին	2	2	2			
Անձնական հարցով	1	1		1		
ԸՆԴԱՄԵՆԸ	**28**	**28**	**7**	**21**		